անդ և կացեալ սպասաւորութեամբ միառ մի՝ եւ 'ի կայսրութիւն։ Իսկ իբրև դիտացին՝ թէ թագաւորեաց, գնացին առ նա և ասեն, այս է հրամանն Աստուծոյ, որ պատկերքս՝ զոր ունիք յեկեղեցիս և 'ի տունս ձեր, խորտակել հրամայեա՛, զի կուռք են և պիղծ։ Եւ Լևոն յղեաց 'ի Հռոմ և յամենայն տեղիս, և պատճառանօք զամենայն պատկերս սրբոց և զՓրկչին և զՏիրամօրն ետ բերել 'ի Կոստանդնուպօլիս. և բերեալ զամենայն 'ի մի տեղի՝ այրեաց հրով։ Իսկ յաւուրս սորա՝ մարմին Եղիսէի մարգարէին փոխի յԱղէկսանդրիա. և զմարմին Աւետարանչին Մարկոսի գողացեալ 'ի Վենէտիկ տարան, և անդ կայ փառօք 'ի ներքոյ ասեն միոյ. . . . զայս Լևոն կալաւ աչացաւութիւն սաստիկ, և չարաչար մեռաւ ըստ արժանոյն։

Զենոն Կոստանդ սկսաւ յամի Տեառն ՆՁԴ. ինքնակալեալ ամս ԻԲ. և ոմանք ասեն ԺԴ։ Էր սա միաբնակ, բայց

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան